Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույքը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հետևյալ աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ